«ԳԻՐՔ ԾԱՂԿԱՆՑ»-Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

1935 թ. Դերենիկ Դեմիրճյանը գրում է իր «Գիրք ծաղկանց» վիպակը։ Նյութ առնելով հայկական միջնադարից, նա ձգտել է ստեղծել այնպիսի գործ, որը հարազատորեն վերարտադրեր ժամանակը, արժեքավորեր այն մնայունն ու գեղեցիկը, որ ստեղծել է ժողովուրդը, արտացոլել նրա հոգևոր ընթացքի դարավոր ուղին։

Ինչպե՞ս է ծնունդ առել մեր միջնադարյան լուսաշող ու պայծառ արվեստը, ի՞նչ պայմաններում, ովքե՞ր են եղել նրա հանճարեղ մշակները, ինչպե՞ս է նրա մշակույթը դիմագրավել արհավիրքներին ու գոյատևել, ինչո՞ւմն է նրա հավերժության գաղտնիքը։ Այս հարցերն են հուզել մեծ արվեստագետին, և դարերի մեջ խորամուխ եղած նա փնտրել է դրանց պատասխանը։

Իր մտահղացումն իրագործելու համար Դեմիրճյանը կերտել է սիմվոլիկ կերպարների մի գեղեցիկ շարք։ Բնականաբար հարց է առաջանում, որքանո՞վ է նա հենվել պատմության վրա, և ունե՞ն այդ կերպարներն իրենց իրական նախատիպերը։ Մինչ այժմ նկատված է միայն, որ վիպակի կենտրոնական հերոսի՝ Զվարթի կերպարի հիմքում ընկած է միջնադարի հայ հանճարեղ բանաստեղծ Կոստանդին Երզնկացու կյանքն ու ստեղծագործությունը, մանրամասները, սակայն, չեն պարզաբանված։ Բոլորովին չի նկատված, որ նկարագրվող ձեռագրի («Գիրք ծաղկանց») պատմության հիմքում էլ ընկած է կոնկրետ ձեռագիր, որն այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում։

«Գիրք ծաղկանց»-ի գլխավոր հերոսը՝ Զվարթը, տարօրինակ մի պատանի է։ Նրան այլ կերպ են երևում շրջապատն ու աշխարհը։ Նրա երևակայությունն անսովոր թռիչքներ է անում։ Բնությունը նրա համար հրաշք է, ու նա ոգևորված, հափշտակությամբ պատմում է բոլորին այդ հրաշքի մասին։ Ծաղիկները կրակներ են, պտուղները՝ ազնիվ քարեր, թռչուններն ու գազանները՝ զգեստավորված խեղդատակներ։ «Խենթ» Զվարթին ծնողները վանքին են նվիրում, բայց այնտեղ էլ չի մեռնում նրա ձիրքը։ Զվարթն անհանգիստ տենդի մեջ է. նա տանջվում է, ելք է որոնում։ Եվ ահա վանքի մենախցում, խորունկ գիշերով նրան հայտնվում է տեսիլը։

«Հանկարծ օթևանի պատը, որ թվում էր անհուն, հեռվից, շատ հեռվից ճեղքվեց ու ներս հոսեց ո՞վ—ինքը՝ Զվարթը... Նա արեգակնափայլ աչքեր ուներ, որ վառվում էին գոհարների պես։ Այդ աչքերն այնպես էին նայում, որ Զվարթը զարհուրեց...

Եվ չիշխեց վեր նայել։ Բայց մի ուժ դրդում էր Զվարթին նայել նրան։ Եվ ահա, երբ աչքերը վեր բարձրացրեց, զարհուրած ընկավ հատակին։ Երկար մնաց այդպես ընկած, հետո ինչ եղավ—չի հիշում Զվարթը։ Միայն զգաց, որ էակը մոտեցավ իրեն և կռանալով ձեռքը դրեց նրա ուսին։ Նրա կռանալն

զգաց նրանով, որ նա շշնջում էր։ Անբացատրելի էր այդ շշունջը, երգաձայն, անուշ...

Եվ հանկարծ Զվարթը զարթնեց արթնության մեջ։ Նա զգաց խոսքը։ Նրա սիրտը մարեց մի անըմբռնելի տենչով։ Նա տենչաց խոսել, խոսել բարձր, երգաձայն, հանդիսավոր, թեկուզ բազմության առաջ։

Եվ սկսեց մի ասք շշնջալ կիսաձայն, պատկերներ բազմաբովանդակ»[1]։

Այս պատկերը Դեմիրճյանը վերցրել է Կոստանդին Երզնկացու «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու...» հայտնի բանաստեղծությունից, ուր Երզնկացին, չարախոսներից ու նախանձողներից բողոքելով, պատմում է իրեն հայտնված աստվածային տեսիլի մասին և փորձում իր բնատուր ձիրքը ներկայացնել որպես աստվածատուր շնորհ։

Ես երբ հընգետասան ամաց էի մանուկ տըղայ,
Ի վանք յուսոմն էի, և գիշեր մի տեսիլ տեսայ.
Մանուկ ի լուսեղեն յաթոռ նըստել որպէս արքայ,
Նըման արեգական է գեղեցիկ որ լոյս կու տայ։

Այնպէս ես յիր փառացն և ի լուսոյն զարհուրեցայ,
Որ չըկարցի հարցանել թէ՝ Տէր, ո՞վ ես, զանունդ ասա.
Երկիր պագի իրեն ի յայն պահուն ունց ինք տեսայ,
Ու իրեք խնդրրուածով հողոյն հասար խոնարհեցայ...

Նա ինձ պատասխանեց, քաղցր ձայնով ասաց՝ դընա՛։
Նա իր բարբառն ահեղ զարհուրեցոյց զիս, որ զարթայ.
Եշնեմ կապեմ գօտի ու մէն յաղօթք ես կանդնեցայ.
Խնդրի յայն սուրբ տեսոյն, որ այլ մի հետ առ իս նա գայ...

Եղև յանկարծակի ինձ բան խօսիլ՝ ով ուզենայ,
Այնպէս, որ ես ի յիմ խօսից շարելըն զարմացայ.
Սիրով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ,
Չհոգիս փոխան տըւի, 'ւ ապա ես այն հոգոյն հասայ...[2]

Դեմիրճյանը մշակել է այս սյուժեն։ Աստվածային հայտնության պատկերը վերափոխված է։ Այստեղ Զվարթին հայտնվում է ոչ թե Քրիստոսը, այլ Զվարթի իր իսկ ոգին, որը մինչև այդ անհայտ էր իրեն։ Գրողը փորձում է բացատրել մեծ արվեստի առեղծվածը։ Ինչպե՞ս է ծնվում բանաստեղծը, հայտնությո՞ւն, հրա՞շք է նրա ձիրքը, թե բնական մի երևույթ։ Դեմիրճյանն այն ներկայացնում է որպես մարդկային բացառիկ շնորհ, երկրային իսկական հայտնություն։

Կոստանդին Երզնկացու հաջորդ տաղը, որից օգտվել է Դեմիրճյանը, կոչվում է «Բանքս վարդի օրհնակաւ զՔրիստոս պատմէ»։ Այս տաղից է քաղված Զվարթի հորինած վեպը ծաղիկների մասին։ Դեմիրճյանը յուրատեսակ

---

1 Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1960, էջ 163—164։

2 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1960, էջ 187—190։

մոտեցում է հանդես բերել։ Պահպանելով բանաստեղծության հիմնական գաղափարն ու գեղարվեստական հնարանքները, նա մշակել է բնագիրը, լեզվաոճական պարզեցումների ենթարկել այն։

Ահա մի հատված մշակումից.

Եկավ գարունը, ծաղիկները հորդեցին,
Մանիշակը ժողովեց բոլոր ծաղիկներին
Եվ դավ սարքեց վարդի հանդիման։
Վճռեցին ապանել վարդին, որ չլինի թե
Գա զարդարվի վարդն կարմիր,
Ամենքի ուշը գրավի վրան,
Ամենքը նայեն վարդին կարմիր
Եվ իրենք աննկատելի մնան...
Հանկարծ հնչեց ձայնը բլբուլի,
Եվ վարդը զարթնեց մեջն իր կանաչ վրանի,
Հանեց իր կանաչ կապան,
Հագավ իր վառ ծիրանին։
Ծաղիկները փախան, ցրվեցին, ոմանք ամոթից
Ոմանք շփոթված, ոմանք սուգ մտան, կապտեցին,
Ոմանք երկյուղից դարձան դեղին... (էջ 166—167)։

Այժմ ծանոթանանք Կոստանդին Երզնկացու բանաստեղծության համապատասխան հատվածներին.

Այսօր եղև պայծառ գարուն, ցընծան ծաղկունք և յորդորին...
Մանուշակն էր ժողովել հաւսար զամէն զծաղկանին,
Թէ՝ Եկէք մեք սիրարան երթանք կտրենք զվարդենին,
Որ չգա վարդն կարմիր և գեղեցիկ տերև ոփոին,
Ու ի նորա պայծառ տեսուն որդիք մարդկան ի մեզ չհային...

Լուր պլպուլն յանկարծակի եկաւ ձայնեց ի ծաղկընին,
Թէ՝ Զարթաւ վարդն ի քնուն ի մէջ կանաչ իւր վրանին։

Վարդն լըսեց զձայն պլպուլին, էբաց ըզդուրըն վրանին։
Ու էհան զկանաչ կապայն՝ հագաւ զաթլասն և զխրմզին։

Լուր ծաղկունք թառամեցան, կէսք մի զտերևրն թափեցին,
Կէսք մի այլ զփախուստ առին՝ բարձր 'ւ ի դժար լերունքն ելին.
Կէսք մի այլ ի յամօթոն կապոստ հագան 'ւ ի սուգ մրտին,
Եւ կէսք մի այլ ի յերկեղոյն 'ւ յահէն դողան 'ւ եղեն դեղին։

(էջ 137—140)։

Մշակելով բնագիրը, Դեմիրճյանը հարազատ է մնացել նրա ոգուն, իսկ տեղ-տեղ էլ պարզապես նույնությամբ է թողել այն.

Սեր է ծառն, սեր ծաղիկն,
Սեր է հավքի ձայնն ի ծառին,
Սեր է վարդն, սեր բլբուլն,
Սիրով է նստել վրա վարդին...
Եթե սերն ինձնից զատվի,
Ինձ կտանեն ցուրտն ու քամին (էջ 167)։

Այս տողերը բնագրում ունեն գրեթե նույն տեսքը.

Սէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հաւուն ձայնն ի ծառին,
Սէր է վարդն ու սէր պլպուլն՝
սիրով նըստել ի վրայ վարդին...
Ու թէ սէրն յիմնէ զատի՝
նա զիս տանի հողմն ու քամին (էջ 141—142)։

Վիպակում, հաղածանքից խուսափելու համար, Զվարթը ստիպված մեկնում է իր վեպը ծաղիկների մասին, բացահայտելով իր կիրառած այլաբանությունների իմաստը.

«Ասե՞մ ով է վարդն կարմիր
Կամ ո՞վ են ծաղկունքն ամեն,
Կամ թե ո՞վ է բլբուլը քաջ,
Կամ թե ո՞վ է ձայն բըլբուլի։

Ծաղկունք քահանայք են այն հին օրինի, վարդը՝ Հիսուսը, մանիշակը Հուդան, ով դավեց Հիսուսին և բլբուլը Գաբրիելն էր, որ փողը փչեց։ Վարդն, որ հագավ ծիրանին, Քրիստոսն էր, որ հարություն ստավ, ծաղկունքը, որ թաստամեցին, դեղնեցին, զինվորներն էին, որ փախան նրա գերեզմանից»։

Այս բոլորի հիմքը կրկին Կոստանդին Երզնկացու տաղերն են։ Դեմիրճյանը տվյալ դեպքում օգտվել է բանաստեղծի «Մեկնութիւն վարդին համառոտ...» տաղից։ Այստեղ էլ նա նույն կերպ է մոտեցել հարցին։ Պահպանելով բանաստեղծության հիմնական գաղափարը, նա մշակել ու պարզեցրել է այն։ Համոզվելու համար հիշենք տաղի համապատասխան հատվածները.

Եղբա՛յր, ակամջ դիր ու լըսէ, որ ես ասեմ ըզմեկնութիւն,
Թե ո՞վ է վարդըն կարմիր, կամ որ ոք են այն ծաղկընին,
Կամ ո՞վ է սէրըն վարդին, կամ ո՞վ է ձայն բըլբուլին,
Կամ ո՞ր ոք են այն ծաղկընին, որ ի վարդէն փախուստ առնին։

Ծաղկունքն որ ժողովեցան՝ այն քահանայքն հին օրինին,
Եւ կարմիր վարդըն վառեալ՝ այն էր Յիսուս՝ հօր միածին.
Մանիշակըն որ ժողովեց հաւատար զամենայն ծաղկընին,
Այն Յուդայն էր աշակերտ, մատնեաց ի մահ զարքայն վերին։

---

3 Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 168—169։

Եւ բըլբուլն յանկարծակի ելնէ—կանչէ ի վերայ վարդին,
Այն փողըն էր յարութեան զոր և գոչեաց յառաւօտին.
Վարդն որ եհան զկանաչ կապան, հագաւ զատլասն ու խըրմըզին,
Այն Քրիստոսն էր որ յարեաւ ի մեռելոց՝ արեամբն յերկին։

Ծաղկըներն որ թառմեցան, կէսք մի զտերևըն թափեցին,
Այն զինուորքն են, որ եղեն որպէս մեռեալք յահեղ ձայնին...
(էջ 145—146)։

Այսպիսով, Զվարթի կերպարն ստեղծելիս, Դեմիրճյանն օգտվել է Կոստանդին Երզնկացու «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու...», «Բանքս վարդի օրինակավ զՔրիստոս պատմէ», «Մեկնութիւն վարդին համառօտ...» տաղերից։

«Գիրք ծաղկանց»-ի հերոսներից է նաև Ղունկիանոսը։ Նա Զվարթի միակ մտերիմն է վանքի մռայլ կամարների տակ։ Զվարթի մահից հետո բարի Ղունկիանոսն է Թադեին պատմում Զվարթի վեպը ծաղիկների մասին ու խնդրում ծաղկել (նկարազարդել) այն։ Հետագայում կյանքի գնով Ղունկիանոսը փրկում է այդ պատկերազարդ ձեռագիրը Թշնամու ձեռքից։

Ղունկիանոսի կերպարի նախատիպը նույնպես կարելի է գտնել Կոստանդին Երզնկացու կենսագրության մեջ։ Դա Ամիր Փոլինն է, Կոստանդին Երզնկացու ձեռագրերի գրիչն ու ստացողը։ Հայտնի է, որ նա եղել է բանաստեղծի մտերիմն ու բարեկամը։ Երզնկացին նույնիսկ հատուկ տաղ է նվիրել նրան՝ «Բան Կոստանդեայ առ մեր հոգևոր եղբայրն Ամիր, հոդով ի հոդի և սրտէ ի սիրտ» խորագրով[4]։ Ամիր Փոլինի միջոցով են Կոստանդին Երզնկացու տաղերը փրկվել կորստից ու հասել մեզ։ Ենթադրվում է, որ նա դրանք ընդօրինակել է բանաստեղծի մահից հետո։ Այս փաստերը դալիս են հավաստելու, որ Ղունկիանոսի կերպարի հիմքում էլ Ամիր Փոլին անունով պատմական կոնկրետ անձնավորությունն է ընկած։

Վիպակը գեղեցիկ ավարտ ունի։ Թշնամին ասպատակում է երկիրը, ժողովուրդը սովի է մատնված։ Զրաղացպան Հակոբն իր որդի Հուսիկին ուղարկում է Դամասկոս տերմացու ցորեն բերելու, որպեսզի սովից փրկի ընտանիքը։ Հուսիկը վերցնում է հոր վերջին փողերն ու ճանապարհվում։ Դամասկոսի շուկայում նա տեսնում է, թե ինչպես օտար ամբոխը ծիծաղելով ձեռքից ձեռք է փոխանցում մի կաշեպատ ձեռագիր։ Մեկը հանկարծ բացում է այն.

«Գարուններ բացվեցին և մրգահաս աշուններ, երկինքներ տուտակ, բուրաստաններ, հրեղեն վարդեր, վարդեր ոսկեձույլ, և ծաղիկներ մանվածապատ, ջերմ, հափշտակված, ջերմ հրճվալից։ Հուսիկի աչքերում նկարվեցին իր լեռների, հովիտների մտերիմ գույները...

Հուսիկը մոտ գնաց և գիրքը շոշափեց։ Տաք էր արծաթը նրա մատների մեջ։ Բացեց գիրքը։ Նայեց նրան թեթև, հանդարտ։ Աչքերը երևացին ծաղիկների միջից։ Գիրքը հանգիստ էր մի մարդու նման, որ գիտե կյանքի բոլոր օրենքները և կենդանության գաղտնիքները և չի վախենում մահից, սիրում է կյանքը և հավատով է ճակատագրի դեմ»[5]։

---

4 Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 195։
5 Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, էջ 122։

Հուսիկը տալիս է ունեցած ամբողջ դրամը, դնում է «Գիրք ծաղկանց»-ը և սերմացուի փոխարեն տուն վերադառնում այդ ձեռագրով։

Արդյոք Դեմիրճյանի երևակայության արդյունքն է, թե սա էլ իրական հիմք ունի։ Պարզվում է, որ մեծանուն գրողն այստեղ էլ հավատարիմ է մնացել պատմական իրականությանը։ Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի հայերեն ձեռագրերի «Մայր ցուցակում» նշված է նաև մի գեղեցիկ Ավետարան, դա № 88 ձեռագիրն է։ Այն ունի հարուստ մանրանկարչություն. ոսկեզարդ, բազմագույն զարդագրեր, կիսախորաններ, խորաններ, մանրանկարներ։ «Ձեղուններն ու տանիքը լի են ամենազգի դրուագներով, աքաղաղներով, պէս-պէս թռչուններով և ծաղկաբեր ծառերով»[6], կարդում ենք նրա նկարագրության մեջ։ Գրության ժամանակը ստույգ հայտնի չէ. 1205 թ. այն կամ վերանորոգվել է, կամ ընդօրինակվել։ Ուշագրավ է նրա հետագա ճակատագիրը։ Պահպանված մի հիշատակագրության մեջ ասվում է. «Ի ժամանակին որում եկ արքայն Պարսից Թամուրզան խուժուդուժ աղգաւ այլակերպ և այլդէմք, լայնաճակատ և նեղաչուի, քաւսա և ժանդ, և եկ բազում զօրաւք յարևելից կողմանէ և սաստիկ զաւրօք եկն ի վերայ աշխարհիս Շամայ, և գնաց մինչև յԵրուսաղէմ. և զայն տարին յաշխարհիս եկաց և յայնչափ գառնութիւն արար որ ընդ գրով չեմ վարել արկաներ. այնչափ մարդիք զոր էսպան զոր գերի վարեաց ու զոր ի սովու բազումք մեռան, որ հայր յորդո կու հեռանայր և որդի ի հօրէ, յայնմ ժամանակին գնացեալ Թաւաքալն՝ Հալպա տանուտէրն՝ ի հացի գնել ի յԱնթափ քաղաք, և տեսեալ զտուրբ Աւետարանս ի ձեռս այլազգեաց և յոյժ արտասուեաց, վասն այնորիկ, զի անարգէին զԱւետարանս և զՔրիստոս... յայնժամ աստուածային սիրովն վառեալ փափաքեցաւ տուրբ Աւետարանիս, ետ զիւր հացի գին և էառ զսուրբ Աւետարանս և ազատեաց յանաւրէնաց և էրեր յիւր տուն... ի ժամանակին յայնմիկ յորում առաք զսուրբ Աւետարանս՝ էր թիւն Հայոց ի ՊԽԹ»[7]։

Ինչպես տեսնում ենք, այս տվյալները համապատասխանում են «Գիրք ծաղկանց»-ի մասին Դեմիրճյանի հայտնած տեղեկություններին։ Այսպես. թե՛ մեկը, և թե՛ մյուսը գերված են Լենկ Թեմուրի («Թամուր ղանի») ասպատակությունների ժամանակ, թե՛ մեկի, և թե՛ մյուսի փրկողը՝ հացի (ցորենի) դրամն է նվիրում փրկությանը, իսկ հիշատակված Շամը նույն Դամասկոսն է։

Ահա թե ինչպես է ակամավոր գրողը միմյանց հյուսել XIII—XIV դդ. մեծ բանաստեղծ Կոստանդին Երզնկացու և Մխիթարյան Մատենադարանի № 88 ձեռագրի հետ կապված բանաստեղծական, մանրանկարչական, կենսագրական և այլ փաստերը՝ վերտելով իր անզուգական վիպակը՝ «Գիրք ծաղկանց»-ը։

Դեմիրճյանն իր վիպակը վերջացնում է այսպես. «Երկաթե գրադարաններում լռում են դարերը։ Մի ափեհեր գլուխ հակված պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ...»[8]։

---

6 Բարսեղ Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 397—398։

7 Նույն տեղում, էջ 401—402։

8 Դերենիկ Դեմիրճյան, նշվ. աշխ., էջ 180։

Այդ ալեհեր կերպարը ինքը՝ Դերենիկ Դեմիրճյանն է։ Դեռևս 1927 թ. մայիսի 6-ին Ավ. Իսահակյանի հետ լինելով Մատենադարանում, նա այցելուների մատյանում գրել է. «Տասնհինգ դարեր են լռում այս պատերի մեջ և ես լսում եմ նրանց լռությունը»։

ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА «КНИГИ МИНИАТЮР»

ГРАЧЬЯ ТАМРАЗЯН

Резюме

В специальной литературе отмечалось, что главный герой повести Демирчяна своей судьбой напоминает средневекового поэта Костандина Ерзнкаци. Создавая образ главного героя, Демирчян использовал как биографические сведения, касающиеся Костандина Ерзнкаци, так и поэтические отрывки из его стихов.

Один из героев повести Лункиан также имеет свой исторический прообраз. Это Амир Полин, писец дошедшей до нас рукописи Костандина Ерзнкаци.

В основу упомянутой в повести рукописи «Книга миниатюр» положена история другой рукописи. Эта рукопись № 88 матенадарана Мхитаристов в Венеции, которая перекликается с «Книгой миниатюр».